ՀՀ պետական համակարգը

ա. Իշխանության մարմինների ձևավորումը

Հայաստանի անկախության հռչակումից և Բաթումի հաշտության պայմանագրի կնքումից հետո Հայոց կենտրոնական ազգային խորհուրդը ձեռնամուխ եղավ իշխանության մարմինների ու առաջին հերթին գործադիր (կառավարության) և օրենսդիր (խորհրդարանի) մարմինների ձևավորմանը: Խնդիր դրվեց իշխանության ձևավորման հիմքում դնելու կուսակցական սկզբունքը: Սակայն նորահռչակ հանրապետությունում դժվարին խնդիր էին իշխանության ձևավորումը և պետականության կերտումը: Դարեր շարունակ պետականազուրկ Հայաստանն ու հայ ժողովուրդը չեն ունեցել ո՛չ վարչակազմակերպական ու կադրային և ո՛չ էլ նյութական բավարար միջոցներ, ժողովուրդը անկախությանը պատրաստ չէր նաև հոգեբանորեն: Անկախության հռչակումից հետո անհրաժեշտ էր դարերի ընթացքում հայ իրականության մեջ ձևավորված ու գործող՝ հիմնականում կրոնահամայնքային, ինքնակազմակերպման ձևից անցում կատարել ազգի ինքնակազմակերպման բարձրագույն ձևին՝ ազգային անկախ պետականությանը:

1918 թ. հունիսի 7–ին Հայոց ազգային խորհուրդը կառավարության նախագահ (վարչապետ) ընտրեց Հ. Քաջազնունուն, որին և հանձնարարվեց կազմել անդրանիկ կառավարությունը: Դեմ քվեարկողները Հայ ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) երկու ներկայացուցիչներ էին, որոնք ցանկանում էին, որ իրենց կուսակից Մ. Պապաջանյանին տրվի վարչապետի պաշտոնը և կառավարության ձևավորման իրավունքը: Տարբեր պատճառաբանություններով կառավարության մեջ մտնելուց հրաժարվեցին նաև սոցիալիստ–հեղափոխականները (էսէռները) և սոցիալ–դեմոկրատները: Այդպիսով՝ միջկուսակցական (կոալիցիոն) սկզբունքով կաբինետի ձևավորումը չհաջողվեց, ուստի անդրանիկ կառավարությունը կազմվեց հիմնականում մեկ կուսակցության՝ ՀՅԴ ներկայացուցիչներից:

Հ. Քաջազնունու գլխավորած անդրանիկ կառավարության մեջ մտան ՀՅԴ 4 գործիչներ՝ Հ. Քաջազնունի՝ նախարար–նախագահ, Ա. Խատիսյան՝ արտաքին գործերի նախարար, Ա. Մանուկյան՝ ներքին գործերի նախարար, Խաչատուր Կարճիկյան՝ ֆինանսների նախարար և երկու անկուսակցական՝ գեներալ Հովհաննես Հախվերդյան՝ զինվորական նախարար[50] և մի փոքր ուշ՝ հուլիսի 28–ից՝ Գ. Պետրոսյան՝ արդարադատության նախարար: 1918 թ. հուլիսի 19–ին Հայաստանի Հանրապետության ոչ լիակազմ կառավարությունը և Հայոց ազգային խորհուրդը Թիֆլիսից ժամանեցին մայրաքաղաք Երևան: Կառավարության կազմը Երևանում ստացավ ավարտուն տեսք:

Մինչ նորակազմ կառավարությունը Թիֆլիսից կժամաներ Երևան, տեղում պետական կառուցվածքներ ստեղծելու և կարգուկանոն հաստատելու ուղղությամբ հսկայական կազմակերպչական աշխատանք էին կատարել Երևանի Հայոց ազգային խորհուրդն ու ժողովրդի կողմից դիկտատոր ճանաչված Ա. Մանուկյանը: Վերջինս պետական շինարարության աշխատանքներ կատարելու փորձ էր ձեռք բերել դեռևս 1915 թ. Վան–Վասպուրականի նահանգապետ եղած ժամանակ: Երևանում ստեղծվել էր կառավարության տիպի գործադիր մարմին, որը կոչվում էր ժամանակավոր վարչություն կամ վարիչների մարմին: Այն ուներ գործերի վարման բաժիններ (ստորաբաժանումներ)՝ ներքին գործերի,

---

[50] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն)..., վավ. 32, էջ 53:

ռազմական, ֆինանսական, տնտեսական, պարենավորման և այլն, որոնք հիմք հանդիսացան նախարարությունների համար: Վարչության աշխատանքներում ընդգրկված էին բանիսից և հեղինակությունն վայելող անձինք՝ Մ. Մուսինյանը, Հ. Մելիքյանը, Ս. Թորոսյանը և ուրիշներ: Իսկ Ա. Մանուկյանը վարում էր Երևանի նահանգային վարչության նախագահի և գինվորական գործերի վարիչի պաշտոնը:

Ամենահարցազրույնը ներքին գործերի նախարարությունն էր, որի ենթակայության ներքո էին ոչ միայն վարչատարածական–իրավական համակարգը, այլև հաղորդակցությունն, պարենավորման, խնամատարության, ներգաղթի, առողջապահության, կրթության, տեղական ինքնավարությունների, փոստ–հեռագրական և այլ ոլորտները: Համակարգում գործում էր նաև «այլազգիների վարչությունը»: Հետագայում նախարարության որոշումից առաջացան մի չարք նոր նախարարություններ:

Ժամանակի ընթացքում հանրապետության սոցիալ–տնտեսական ու քաղաքական վիճակի կայունացման, նոր խնդիրների լուծման հրամայականով փոփոխություններ կատարվեցին կառավարության կառուցվածքում. առաջացան նորերը, հները վերակառուցվեցին, իսկ որոշ նախարարություններ վերացան:

Մինչև 1920 թ. մայիսը կառավարությունը կոչվում էր «Ինքնտրների խորհուրդ», իսկ դրանից հետո՝ նախարարների խորհուրդ: Հայաստանի Հանրապետության գոյության ընդամենը 2,5 տարվա ընթացքում գործել են հետևյալ կառավարությունները. առաջին՝ Հ. Քաջազնունու վարչապետությամբ (1918 թ. հունիսի 7–ից մինչև 1918 թ. նոյեմբերի 4–ը), երկրորդ՝ դարձյալ Հ. Քաջազնունու (1918 թ. նոյեմբերի 4–ից մինչև 1919 թ. օգոստոսի 7–ը, իսկ փաստացի՝ մինչև ապրիլ, երբ վարչապետը գործուղվեց արտասահման), երրորդ՝ Ա. Խատիսյանի (1919 թ. փետրվարից վարչապետի պաշտոնակատար, իսկ օգոստոսի 7–ից մինչև 1920 թ. մայիսի 5–ը՝ վարչապետ), չորրորդ՝ Հ. Օհանջանյանի (1920 թ. մայիսի 5–ից մինչև նոյեմբերի 23–ը) և հինգերորդ՝ Մ. Վրացյանի (1920 թ. նոյեմբերի 23–ից մինչև դեկտեմբերի 2–ը):

Կուսակցական պատկանելության տեսակետից 4 վարչապետերն էլ իրենց կաբինետների հիմնականում ներկայացնում էին ՀՅԴ կուսակցությունը: Սակայն այդ ընթացքում երկու անգամ հաջողվել է ստեղծել միջին–ազգական (հարիչյան) կառավարություն. մի դեպքում 1918 թ. նոյեմբերի 4–ից մինչև 1919 թ. հունիսի վերջերը՝ Հ.Ժ–ի հետ, իսկ մյուսում՝ 1920 թ. նոյեմբերի 23–ից մինչև դեկտեմբերի 2–ը՝ Է.Ա.–ների կուսակցության հետ:

Հանրապետության երկրորդ վարչապետ Ա. Խատիսյանը, բնութագրելով Հայաստանի կառավարության գործունեության ողջ ժամանակաշրջանը, այն բաժանել է երեք փուլերի. առաջին շրջանն պետական–կազմակերպչական, երկրորդ՝ քաղաքացիական–տնտեսական գործունեության և երրորդ՝ արտաքին ու ներքին թշնամիների դեմ պայքարի, վերջին շրջանը, ինչպես հայտնի է, ավարտվեց 1920 թ. դեկտեմբերի 2–ին՝ Հայաստանի Հանրապետության անկմամբ և նրա խորհրդայնացմամբ[51]:

* * *

Կառավարության ձևավորումից հետո խնդիր դրվեց հիմնելու օրենսդիր մարմինը (խորհրդարանը): Հայոց պետականությունը կառուցվելու էր եվրոպական քաղաքական ու պետական համակարգի օրինակով հաշվի առնելով տեղական պայմանները և հայ ժողովրդի ազգային առանձնահատկությունները:

1918 թ. հուլիսի վերջին Երևանում Հայոց կենտրոնական և Երևանի հայ ազգային խորհուրդների միջև տեղի ունեցած միջկուսակցական խորհրդակցությունների արդյունքով հիմնվեց Հայաստանի բարձրագույն օրենսդիր մարմին՝ խորհրդարանը, որը պաշտոնապես կոչվեց Հայաստանի խորհուրդ: Քանի որ ժամանակի և քաղաքական հանգամանքները թույլ չէին տալիս միանգամից անցկացնել խորհրդարանի ընտրություններ, որոշվեց Հայոց ազգային խորհրդի անդամների (15) թվաքանակի, կուսակցական համամասնությամբ եռապատկելու (բացի երեք անկուսակցականներից), ինչպես նաև հանրապետությունում ապրող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ հրավիրելու միջոցով կազմել Հայաստանի առաջին օրենսդիր մարմինը՝ Հայաստանի խորհուրդը: Այդ եղանակով (որը կիրառվել էր նաև Անդրկովկասի սեյմի ձևավորման ժամանակ) խորհրդարանում տեղեր զբաղեցրին. ՀՅԴ 18 ներկայացուցիչ, ՀԺԿ 6 ներկայացուցիչ, սոցիալ–դեմոկրատ՝ 6 ներկայացուցիչ, սոցիալիստ–հեղափոխական (Է.Ա.)՝ 6 ներկայացուցիչ: Նշված կուսակցություններն էլ կազմեցին խորհրդարանի չորս խմբակցությունները, որոնցից ամենամեծը ՀՅԴ խմբակցությունն էր: Բայց նրանցից և ոչ մեկը չուներ բացարձակ ձեռնամուտություն: Հայոց ազգային խորհրդի երեք անկուսակցականները չէին կարող եռապատկվել: Նրանք զբաղեցրին ընդամենը երկու տեղ, որովհետև երրորդ անդամը՝ Տիգրան Բեկզադյանը, կառավարության հանձնարարությամբ անցավ գինվանագիտական աշխատանքի:

Ինչպես նշվեց, խորհրդարան հրավիրվեցին նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ՝ 6 թուրք–թաթար, 1 ռուս և 1 քուրդ (հզդի) ընդամենը 8 անդամ: Այսպիսով Հայաստանի ոչ ընտրովի առաջին գումարման խորհրդարանն ուներ 46 պատգամավոր (38–ը՝ հայ, 8–ը՝ այլազգի)[52]:

Հայաստանի խորհրդի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1918 թ. օգոստոսի 1–ին Երևանի քաղաքային ակումբի շենքում: Թուլասաստան չկայացած Սահմանագիր ժողովի և Անդրկովկասի սեյմի պատվիրանների օրինակով մշակվեց ու հաստատվեց Հայաստանի խորհրդի աշխատակարգը՝ բաղկացած 8 բաժնից և 201 հոդվածից, որը կանոնակարգում էր խորհրդարանի կառուցվածքը, նախագահության, հանձնաժողովների ձևավորման ընթացակարգը, օրենսդրերի մշակման, քննարկումների ու քվեարկությունների կարգը և այլն:

Հայաստանի խորհրդի առաջին նիստը, աշխատակարգի համաձայն, բացեց տարիքով ավագագույնը՝ Հայոց ազգային խորհրդի փոխնախագահ Ավետիք Սահակյանը (ՀՅԴ), որն էլ ընտրվեց խորհրդարանի նախագահ: Փոխնախագահներ ընտրվեցին Գրիգոր Տեր–Թեյշարյանը (ՀԺԿ) և Էսէռ Դավիթ Զուբյանը: Օրենսատեղծ աշխատանք իրականացնելու նպատակով բոլոր խմբակցությունների և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ամենաշրջանակով կազմվեցին խորհրդարանի 15 մշտական հանձնաժողովները:

Խորհրդարանի հավանությանը արժանացավ Հ. Քաջազնունու կառավարության հայտագիրը: Վարչապետը երկրի վիճակը բնութագրում էր որպես «անձև քաոս և ավերակների կույտ»: Անհրաժեշտ էր ստեղծել պետական մեքենա, պետական իրավակարգ, հասատակ կարգուկանոն, երկիրը դուրս բերել քաոսից ու անիշխանությունից, գաղթականությանը սնունդ ու բնակարան տալ, կարգավորել պարենավորումը, ֆինանսները, հաղորդակցությունը, ստեղծել բանակ, զսպել ազգամիջյան խռովությունները, լուծել սահմանային վեճերը, մի խոսքով ստեղծել կենսունակ և կազմակերպված պետություն[53]: Այդպիսի ծանր պայմաններում հանրապետության նորաստեղծ իշխանությունները ձեռնամուխ եղան Հայոց պետականության կայացմանը:

[51] Տես Խատիսյան Ա., նշվ. աշխ., էջ 133:

[52] Տես ՀԱՄ, ֆ. 200, ց. 1, գ. 282, թ. 2: Հորիզոն, 27 հուլիսի, 1918: Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն)..., վավ. 33, էջ 53–54:

[53] Տես նույն տեղում, վավ. 35, էջ 57–59: Ձանգ, 7 օգոստոսի, 1918:

Հայաստանի Հանրապետության բարձրագույն իշխանությունը խորհրդարանն էր: Հայաստանի խորհրդի հանդիսավոր բացման ժամանակ Ա. Սահակյանն ընդգծում էր այն միտքը, որ այսուհետ խորհուրդը լինելու է Հայաստանի Հանրապետության պետական իշխանության գերագույն իրավասու (լիազոր) մարմին: Նա ուշադրություն էր դարձնում ոչ միայն բարձրագույն օրենսդիր մարմնի, այլև առանձին դեպքերում գործադիր իշխանության իրավասություններ[54]:

Խորհուրդը հաճախ իր հանձնաժողովների (կարգադրիչ, պարենավորման, գաղթականության, բժշկասանիտարական, դպրոցական և այլն) միջոցով փաստորեն տնօրինում էր կառավարական բնույթի (խոնարհյի և վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի, ժողովրդի պարենավորման, գաղթականների խնամատարության, տնօրինական գենքի բռնագրավման, կենսական նշանակության մի շարք ապրանքատեսակների վրա պետական մենաշնորհի և նույնիսկ ժողովրդական կրթության) գործերը[55]:

Խորհրդարանը հաճախ օրենքների անվան տակ հրապարակում էր վարչական բնույթի հրահանգներ ու որոշումներ: Խորհրդարանին կից գործում էր պետական վերահսկողության հրահանգները ու որոշումները: Խորհրդարանին կից գործում էր միայն խորհրդարանի առաջ և նրա անունից վերահսկում էր գործադիր իշխանության կառավարության տնտեսական, ֆինանսավարկային, բյուջետային և այլ գործունեությունը և միանգամայն անկախ էր նրանից[56]:

Խորհրդարանի իրավասության մեջ էր մտնում նախարարների խորհրդի (արգարադատության նախարարի) ներկայացմամբ սենատի, դատաստանական պալատի և շրջանային դատարանի նախագահների ու անդամների, ինչպես նաև դատախազների ու նրանցին տեղակալների հաստատումը: Բացի դրանից, խորհրդարանին էր վերապահված դատական վճիռներով (կարգով) դատապարտյալներին ներում շնորհելը, նրանց գործը վերաքննության տալը, քրեադատավարության կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու իրավունքը[57]:

Որպես օրենսդիր մարմին խորհրդարանը վավերացնում էր Հայաստանի Հանրապետության կնքած միջազգային պայմանագրերը, համաձայնագրերը, որից հետո դրանք ստանում էին իրավական ուժ: Խորհրդարանը լիազորում էր կառավարությանը ուրիշ պետությունների հետ վարել բանակցություններ, կնքել միջպետական պայմանագիր–համաձայնագրեր, հաստատել դիվանագիտական ներկայացուցչություններ (միսիաներ) ու պատվիրակություններ: Խորհրդարանը հաստատում էր երկրի ֆինանսական գլխավոր փաստաթուղթը (պետական եկամտացույց), մյուս օրենքներն ու ակտերը:

Այսպիսով Հայաստանի խորհրդարանը բովանդակում էր երկրի գերագույն իշխանությունը, այսինքն՝ Հայաստանը պառլամենտական գերակայությամբ Հանրապետություն էր: Սակայն հետագայում քաղաքական հանդամանքների փոփոխման և ՀՅԴ կուսակցության մենիշխանական ձգտումների հետևանքով այդ վիճակը փոխվեց: Ժամանակ առ ժամանակ կառավարությունը օրյինկով և սուբյեկտիվ հանդամանքների թելադրանքով սկսեց յուրացնել օրենսդիր մարմնի իրավասությունները: Հանրապետության գոյության ընթացքում կառավարությունն ընդունեց շուրջ 1000 օրենք, ակտ և որոշում[58]:

Այն բանից հետո, երբ 1919 թ. գարնանը Հայաստանի քաղաքական դրությունն արդեն բավականաչափ կայունացել էր, իսկ առաջին գումարման խորհրդարանը՝ Հայաստանի խորհուրդը, ընտրվի չէր, և նրա կազմը իրապես չէր արտահայտում երկրի քաղաքական ուժերի հարաբերակցությունը ազգաբնակչության մեջ, խնդիր դրվեց արձակելու նշանակվի խորհրդարանը և համաժողովրդական ընտրությունների միջոցով կազմավորելու նոր խորհրդարան:

1919 թ. հունիսի 21–ից 23–ը տեղի ունեցան Հայաստանի խորհրդարանի ընտրությունները: «Հայաստանի խորհրդարանի ընտրությունների մասին» մարտի 31–ի օրենագծով համաժողովրդական ընտրություններն անցկացվեցին համամասնական (կուսակցական) ընտրակարգով: Համաձայն ընտրությունների մասին օրենքի՝ ընտրելու իրավունք ունեին Հայաստանի Խորհրդարանի՝ 20 տարին լրացած տեսակ բոլոր քաղաքացիները, այդ թվում՝ ՀՀ տարածքում ապաստանած արևմտահայ գաղթականները՝ ընդհանուր, ուղղակի, հավասար և գաղտնի քվեարկության միջոցով: Պառլամենտի թվաքանակը սահմանված էր 80 մարդ[59]: Ընտրացուցակներում ընդգրկված էր 380 հազար ընտրող[60]: Քաղաքական անկյուն վիճակի հետևանքով Կարսում, Շարուրում, Նախիջևանում և մի քանի այլ շրջաններում ընտրություններ չանցկացվեցին: Կազմվեց կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների պատգամավորական թեկնածուների 7 ցուցակ: Մի քանի կուսակցություններ տարբեր նկատառումներով բոյկոտեցին և չմասնակցեցին ընտրություններին[61]: Այդ պատճառով երկրորդ գումարման խորհրդարանի բրդամենը 80 պատգամավորական տեղերից 72–ը զբաղեցրեց ՀՅԴ–ն: Խորհրդարանի մնացած 8 տեղերը զբաղեցրին 4 էսէռ, 2 թուրք, 1 եզդի և 1 անկուսակցական (Արագածոտնի գյուղացիական միությունից):

Երկրորդ՝ ընտրվի խորհրդարանի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ առաջին խորհրդարանի բացումից ուղիղ մեկ տարի հետո՝ 1919 թ. օգոստոսի 1–ին: Այն ղեկավարեց նրա ավագագույն անդամ Ա. Սահակյանը: Խորհրդարանի նախագահ ընտրվեց Ա. Ահարոնյանը, փոխնախագահներ՝ Լ. Շանթը, հետագայում Ս. Տիգրանյանը, Ա. Սահակյանը, Հ. Քալանթարին և ուրիշներ: Որպես Հայաստանի պատվիրակության գլխավոր՝ Ա. Ահարոնյանը արտասահմանում գտնվելու պատճառով չի վարել խորհրդարանի ոչ մի նիստ: Նրան ընտրելով խորհրդարանը ցանկանում էր ընդգծել Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահին ավելի հեղինակություն ու կշիռ հաղորդելու փասար Քարիգի վեհաժողովում: Օգոստոսի 7–ին կազմվեց նոր կառավարություն՝ Ա. Խատիսյանի նախագահությամբ, ձևավորվեցին խորհրդարանի 12 մշտական հանձնաժողովները: Թեև այդ խորհրդարանն ուներ շատ թույլ՝ ընդամենը 8 պատգամավորներից կազմված ընդդիմություն, սակայն օրենսդրական աշխատանքում աչքի է ընկել ավելի մեծ արդյունավետությամբ և արհեստավարժությամբ:

Երկրորդ գումարման խորհրդարանն առանց ընդդիմությունների գործել է մինչև 1920 թ. մայիսի 5–ը: Բոլշևիկների Մայիսյան ապատամբության կապակցությամբ խորհրդարանն ուղարկվել է շուրջ 7–ամսյա հարկադիր արձակուրդի: Արտակարգ իրավիճակի թելադրանքով կառավարությունը յուրացրեց խորհրդարանի օրենսդրական իրավասությունները, և, փաստորեն, հաստատվեց ՀՅԴ բյուրո–կառավարության դիկտատուրա (այսինքն՝ պետական կառավարման համակարգը կուսակցականացվեց), ինչը թուլացրեց պետական իշխանության իրավաբանական և սոցիալական հիմքերը:

Այսպիսով Հայաստանի առաջին Հանրապետության քաղաքական համակարգի անբաժան մաս է կազմել օրենսդիր մարմինը՝ խորհրդարանը, որը ձևավորելիս հաշվի է

---

54 Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն)..., վավ. 34, էջ 54: Ջանգ, 4 օգոստոսի, 1918:

55 Տե՛ս Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918–1920 թթ., Երևան, 2005, էջ 56–57:

56 Տե՛ս Խոնդկարեան Ա., Օպոզիցիան Հանրապետական Հայաստանում. – Վէմ, 1934, Զ, էջ 74:

57 Տե՛ս ՀԱՄ, ֆ. 202, g. 1, գ. 333, p. 4–5, գ. 303, p. 11:

58 Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918–1920 թթ.), Երևան, 1998:

59 Տե՛ս նույն տեղում, վավ. 543, էջ 212–226:

60 Տե՛ս Ժողովուրդ, 18 հունիսի, 1919:

61 Տե՛ս Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 177–183:

առնվել պառլամենտարիզմի այն ժամանակվա համաշխարհային փորձը: Հանրապետության գոյության 2,5 տարվա ընթացքում կազմվել է երկու գումարման խորհրդարան. առաջինը՝ որպես Հայոց ազգային խորհրդի անմիջական իրավահաջորդ, ձևավորվել է առանց ընտրությունների՝ բազմակուսակցական հիմքի վրա՝ գործելով 1918 թ. օգոստոսի 1-ից մինչև 1919 թ. հունիսի 5-ը, իսկ երկրորդը ձևավորվել է համամասնական ընտրությունների միջոցով՝ գործելով 1919 թ. օգոստոսի 1-ից մինչև 1920 թ. դեկտեմբերի 2-ը: Հայաստանի երկու գումարման խորհրդարաններն իրենց գործունեության ընթացքում ընդունել են 300-ից ավելի օրենքներ[62], որոնք նշանակալի դեր են խաղացել Հայոց անկախ պետականության կերտման գործում:

* * *

Հայաստանի Հանրապետության կազմավորման գործում կարևորվում էր երրորդ իշխանության՝ դատաիրավական մարմինների ու արդարադատության կայացումը: Անկախության հռչակումից հետո, չնայած Հանրապետության դժնդակ պայմաններին, այնուամենայնիվ նորակազմ կառավարությունն ու խորհրդարանը առանձին ճիգեր գործադրեցին՝ եվրոպական ժողովրդավարական երկրների օրինակով կազմակերպելու և քիչ թե շատ բնականոն հունի մեջ դնելու Հայաստանի պետական ու հասարակական կյանքը: Անհրաժեշտ էր երկրում հաստատել իրավական նորմերից բխող կարգուկանոն: Սակայն այդ ճանապարհին առկա էին մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ, նույնիսկ հոգեբանական խոչընդոտներ ու դժվարություններ: Աչքի էր զարնում անիշխանական հոգեբանությունը, որ տիրում էր Հայաստանի բնակչության մի ստվար հատվածին: Եվ դա զարմանալի չէր: «Երկարատեւ պատերազմը,– գրում է Վ. Ահարոնյանը,– սովը, ռուս պետականութեան փլուզումը, Հայաստանի անձուկ սահմանների վրայ կախուած արտաքին վտանգը – այս բոլորը հիմնիվեր խախտել էր բնակչութեան մէջ յարգանքը դէպի օրէնքը»[63]:

1917–1918 թթ. Ռուսական նախկին կայսրության փլուզման հետևանքով ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Հայաստանում պետաիրավական հիմնարկները մեծապես քայքայվել էին: Քանի որ Հայաստանի Հանրապետությունը՝ որպես պետական միավոր, անջատվել էր Ռուսաստանից, ուստի նպատակահարմար գտնվեց Հայաստանի տարածքի վրա ժամանակավորապես պահպանել նախկինում գործող օրենքները: 1918 թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանի խորհուրդը հաստատեց օրենսդրական հանձնաժողովի ներկայացրած օրինագծերի փաթեթը Հայաստանում նախկին Ռուսական կայսրության, ժամանակավոր կառավարության, Անդրկովկասի կոմիսարիատի ու սեյմի օրենքները որոշ փոփոխություններով ու լրացումներով ժամանակավորապես գործադրելու մասին: Մինչ այդ փոփոխություններ էին կատարվել քրեական, քաղաքացիական և զինվորական դատավարության օրենսգրքերի համապատասխան հոդվածներում. «Նորին կայսերական մեծության» փոխարեն այսուհետ դատավճիռները կայացվում ու հրապարակվում են «Հանուն Հայաստանի Հանրապետության»: Ելնելով զուտ մարդասիրական դիրքորոշումներից՝ 1918 թ. աշնանը խորհրդարանը մերժեց «Մահապատժի մասին» օրինագիծը, սակայն հետագա հանգամանքները թելադրեցին, որ վերականգնվի պատժի այդ ծանրագույն տեսակը[64]: Հայաստանի Հանրապետությունը մի կողմից՝ փորձում էր

[62] Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918–1919 թթ., մաս 1-ին, Երևան, 1919, էջ 38–61: ՀՀ օրենքների հավաքածու, 1919 թ., էջ 1–93, 1920 թ., էջ 1–72: ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 20, թ. 1–22, ֆ. 200, ց. 1, գ. 86, թ. 32–36, ֆ. 202, ց. 1, գ. 333, թ. 70–160:

[63] Ահարոնեան Վ., Դատարանը Հայաստանի Հանրապետութեան մէջ. – Հայրենիք, 1939, թիվ 7 (մայիս), էջ 127:

[64] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 29, թ. 26:

ստեղծել սեփական, ազգային բովանդակությամբ օրենքներ, մյուս կողմից՝ ժամանակի սղության և արհեստավարժության պակասի հետևանքով ընդօրինակում ու տեղայնացնում էր օտար օրենքներ:

Խորհրդարանի և կառավարության առջև ծառացած անհետաձգելի խնդիրներից էին դատական իշխանության ձևավորումը, վերջինիս հայացումը և ժողովրդավարացումը: Նորակազմ Հանրապետությունում շարունակում էին գործել ռուսական տիրապետությունից ժառանգություն մնացած երկու կարգի դատարաններ՝ քաղաքացիական և զինվորական՝ չհաշված ժամանակավորները: Իրենց հերթին, քաղաքացիական դատարանները բաժանվում էին երկու կարգի՝ ստորին և վերին: Ստորին կամ հաշտարար դատարանը իրավասու էր լուծելու քրեական փոքր գործեր՝ առավելագույնը մինչև վեց ամսվա բանտարկության կամ 500 ռուբլու տուգանքի պատժաչափով հայցերը, իսկ վերին կամ շրջանային դատարանը կոչված էր լուծելու ծանր հանցագործությունները և քաղաքացիական հայցերը: Զինվորականների գործերով զբաղվում էր զինվորական դատարանը: Այդ վիճակը Հայաստանի Հանրապետությունում պահպանվեց մինչև 1918 թ. դեկտեմբերը:

1918 թ. դեկտեմբերի 6-ին խորհրդարանը հաստատեց արդարադատության նախարար Սամսոն Հարությունյանի կողմից կազմված «Դատական հիմնարկությունների մասին» օրինագիծը, որով ռուսական օրենքների հիմունքներով Հայաստանում մտցվում էին հետևյալ դատական ատյանները.

1. Հաշտարար դատարաններ՝ իրենց քննչական բաժիններով: Հանրապետությունում կար ընդամենը 25 այդպիսի դատարան: Երկրի տարածքի ընդարձակմամբ դրանց թվաքանակն ավելի մեծացավ: 1919 թ. մայիսին վերացվեցին նախկին գավառային հաշտարար դատարանները:

2. Երևանի շրջանային (կամ օկրուգային) դատարան՝ քաղաքացիական և վարչական բաժանմունքներով: 1920 թ. ապրիլին շրջանային դատարաններ հիմնվեցին նաև Ալեքսանդրապոլում և Կարսում:

3. Դատաստանական (դատական) պալատ (Երևանում)՝ երկու բաժանմունքներով՝ քաղաքացիական և քրեական:

4. Գերագույն վճռաբեկ ատյան՝ սենատ (Երևանում)՝ երկու համապատասխան բաժանմունքներով (դեպարտամենտներով)՝ քաղաքացիական և քրեական որոշումները բեկանելու խնդիրների վերաքննության համար:

Նախկինում 3-րդ և 4-րդ բարձրագույն դատական ատյանները գործել էին. դատական պալատը՝ փոխարքայության մայրաքաղաք Թիֆլիսում, իսկ սենատը՝ Սանկտ Պետերբուրգում: Այժմ դատական բնույթի ցանկացած խնդիր լուծվելու էր Հայաստանի Հանրապետության շրջանակներում:

Յուրաքանչյուր պետության ժողովրդավարության մակարդակը կարելի է չափել նաև նրա դատական համակարգով և առաջին հերթին՝ երդվյալ ատենակալների ինստիտուտի առկայությամբ: Հայաստանի խորհրդի՝ դեկտեմբերի 6-ին ընդունած հինգ օրենքների փաթեթից մեկն էլ վերաբերում էր երդվյալ ատենակալների դատարանի ստեղծմանը[65]: Սակայն այդ օրենքի գործադրումն ունեցավ մի շարք դժվարություններ՝ հասարակության իրավական ցածր գրագիտությունը, ատենակալների՝ ռուսերենին չտիրապետելը և այլն: Վերջինով պայմանավորված՝ բավականին ձգձգվեց օրենքի կիրառումը: Եվ միայն 1920 թ. մարտի 15-ին Երևանում հանդիսավորությամբ բացվեց երդվյալ ատենակալների դատարանը, վիճակահանությամբ կատարվեց ատենակալների ընտրություն[66]: 1919 թ.

[65] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918–1920 թթ.), էջ 24–25:

[66] Վաղարշյան Ա., Հայաստանի առաջին հանրապետության դատական համակարգը (1918–1920 թթ.), Երևան, 2006, էջ 110–111:

ապրիլին շրջանային դատարանին կից հիմնվեց կարևորագույն գործերի գծով քննիչի պաշտոն:

Արդարադատության համակարգը սկսեց աստիճանաբար հայացվել: Սենատը, փաստորեն, իրականացնում էր նաև դատական գործառույթ մի կողմից՝ վճռաբեկ ատյանի, մյուս կողմից՝ օրենքը պարզաբանողի ու կարգավորողի[67], այսինքն՝ գերագույն դատարանի ու սահմանադրական դատարանի դեր:

Վերոհիշյալ դատարաններից բացի, ժամանակի ընթացքում ստեղծվեցին նաև այլ դատարաններ՝ արտակարգ և ռազմադաշտային, որոնք ունեին ժամանակավոր բնույթ: Այդպիսին էին, օրինակ, 1920 թ. բոլշևիկյան ապստամբության կապակցությամբ հիմնված 4 արտակարգ դատարանները: Քայլեր կատարվեցին դատարանների և դատավարության ազգայնացման ուղղությամբ և այլն:

* * *

Իշխանության համակարգում իրենց ուրույն տեղն էին գրավում տեղական՝ գավառային, քաղաքային և համայնքային կառավարման մարմինները: Բաթումի պայմանագրով Հայաստանի Հանրապետության շուրջ 12 հազար քառ. կմ տարածքը վարչական առումով ներառում էր ընդամենը Նոր Բայազետի գավառն ամբողջությամբ և Երևանի, Ղարաքիլիսայի, Դիլիջանի, Էջմիածնի ու Դարալագյազի գավառները՝ մասնակի:

1918 թ. դեկտեմբերից մինչև 1919 թ. կեսերը՝ թուրքական զորքի հեռանալուց հետո, Հայաստանի Հանրապետության փաստական տարածքը (առանց Լեռնային Ղարաբաղի, Ախալքալաքի գավառի, Լոռվա չեզոք գոտու և այլն), կազմում էր մոտ 45 հազար քառ. կմ[68]: Գավառների թվաքանակը հասավ շուրջ մեկ և կես տասնյակի: 1919 թ. սկզբներին Հայաստանը վարչական առումով բաժանված էր հետևյալ գավառների. Երևանի, Էջմիածնի, Սուրմալուի, Ղարաքիլիսայի, Դիլիջանի (Քարվանսարայի), Լոռիի (Ջալալօղլու), Նոր Բայազետի, Դարալագյազի, Զանգեզուրի, Ալեքսանդրապոլի: 1919 թ. գարնանը Հանրապետությանը միացվեցին Նախիջևանի գավառը (Շարուրի շրջանով) և Կարսի մարզը (ոչ ամբողջությամբ): Ռազմաքաղաքական նկատառումներից ելնելով՝ դրանք փաստորեն ունեին գեներալ–նահանգապետության կարգավիճակ: 1919 թ. հունիսին Նախիջևանի գեներալ–նահանգապետ նշանակվեց գեներալ Գ. Շելկովնիկյանը, նահանգապետ՝ Գ. Վարշամյանը, իսկ Կարսի մարզում նահանգապետ նշանակվեց Ս. Ղորղանյանը: Սակայն 1919 թ. հուլիսին Նախիջևանի թուրք–ադրբեջանական խռովարար ուժերը ապստամբեցին, և երկրամասը փաստորեն անջատվեց Հայաստանի Հանրապետությունից[69]:

Վարչական տեսակետից գավառները բաժանվում էին շրջանների կամ գավառակների, իսկ վերջիններս՝ գյուղական համայնքների: Գավառների գործադիր մարմինը գավառային վարչությունն էր, որը ներքին գործերի նախարարության ենթակայության տակ էր: Գավառը ղեկավարում էր գավառային կոմիսարը:

Արդեն 1920 թ. մայիսին (Մայիսյան ապստամբության հետ կապված՝ իշխանությունը կենտրոնացնելու նպատակով) վարչական տեսակետից Հայաստանի տարածքը բաժանվեց չորս նահանգների՝ Արարատյան, Շիրակի, Վանանդի և Սյունյաց, որի ժամանակ Հանրապետության տարածքը անվանապես հասավ իր առավելագույն չափին՝ շուրջ 70 հազար քառ. կմ, 2 միլիոն ազգաբնակչությամբ:

Իսկ մինչ այդ՝ 1919 թ. գարնանից, Հանրապետությունում ռամկավար կառավարման համակարգի արմատավորման նկատառումով խնդիր դրվեց նշանակովի վարչաոստիկանական կառավարումը փոխարինելու տեղական ինքնակառավարման մարմիններով (զեմստվոներով), մի խնդիր, որ, ինչպես հայտնի է, տասնամյակներ շարունակ ցարիզմի օրոք մնում էր չլուծված:

[67] Տե՛ս Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 144:
[68] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427 (մաս I), թ. 1ա:
[69] Տե՛ս Զոհրաբյան Է.Ա., Նախիջևանի հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918 թ. դեկտեմբեր–1920 թ. ապրիլ), Երևան, 2002, էջ 9:

Կառավարության նախաձեռնությամբ մշակվեց և 1919 թ. մայիսի 23–ին գործողության մեջ դրվեց զեմստվային (տեղական ինքնակառավարման) հաստատությունների մասին օրենքը[70]: Հաստատվեց վերջիններիս ժամանակավոր կանոնադրությունը: Զեմստվային ինքնավարությունների ընտրակարգը չէր տարբերվում խորհրդարանի ընտրություններից: Զեմստվային ինքնակառավարում մտցվեց Էջմիածնի, Դիլիջանի, Ալեքսանդրապոլի, Երևանի, Ղարաքիլիսայի, Նոր Բայազետի գավառներում, իսկ Սուրմալուի և Դարալագյազի գավառներում քաղաքական անկայուն հանգամանքները թույլ չտվեցին այն արմատավորել:

Վերակազմվեցին քաղաքային ինքնավարությունները: Քաղաքները առաջնորդվում էին քաղաքային կանոնադրությամբ: Գոյություն ունեին նահանգային և գավառային նշանակության քաղաքներ: Հանրապետության ճանաչված քաղաքներն էին Երևանը, Ալեքսանդրապոլը, Նոր Բայազետը, Կարսը: 1919 թ. մայիսին Հանրապետության մի շարք բնակավայրեր (ավաններ)՝ Վաղարշապատը, Աշտարակը, Ղարաքիլիսան, Դիլիջանը, Ջալալօղլին, Ղամարլուն, Իգդիրը և Կողբը, վերածվեցին քաղաքների: Քաղաքների թվին էին դասվում նաև Կաղզվանը, Արդահանը, Նախիջևանը, Գորիսը: 1920 թ. հունվարին հիմնվեց Հայաստանի քաղաքների միությունը՝ Երևանի քաղաքագլուխ Մ. Մուսինյանի նախագահությամբ: Իբրև գործադիր մարմին՝ քաղաքային վարչությունը կազմված էր քաղաքագլխից և վարչության անդամներից: Քաղաքային ինքնավարության ընտրովի ներկայացուցչական մարմինը քաղաքային դուման էր, որը ձևավորում էր իր խորհուրդը: Քաղաքային և գավառական ինքնավարությունների ենթակայության տակ էին ոստիկանությունը, կրթությունը, բնակֆոնդը, հողատարածքները, մշակույթը, առողջապահությունը, սանիտարահիգիենիկ, առևտրի, հասարակական սննդի և այլ ոլորտներ: Այսպիսով՝ կարճ ժամանակամիջոցում հնարավոր եղավ Հայաստանի Հանրապետությունում ձևավորել նաև իշխանության միջին ու ստորին օղակների կառավարման քիչ թե շատ գործուն համակարգ:

* * *

Հայաստանի Հանրապետությունը՝ որպես կազմակերպված պետություն, ընդունեց պետական խորհրդանիշները: 1918 թ. հուլիս–օգոստոս ամիսներին ժամանակավորապես՝ մինչև սահմանադիր ժողովի հրավիրումը, Հայաստանի խորհուրդը եռագույնը (կարմիր, կապույտ և նարնջի գույներով) հռչակեց որպես Հանրապետության ազգային–պետական դրոշ: Գույներից կարմիրը խորհրդանշում էր ազատագրական պայքարում հայ ժողովրդի թափած արյունը, կապույտը՝ Հայաստանի ջինջ երկինքը և նարնջին՝ աշխատանքի խտացումը: Ի դեպ՝ Նոր Նախիջևանից Ա. Խատիսյանին ուղղված նամակով և ծիածանակերպ դրոշի մի քանի ջրաներկ պատկերներով եռագույնի վերաբերյալ իր գոհունակությունն ու նկատառումներն է արտահայտել մեծանուն գեղանկարիչ Մարտիրոս Սարյանը[71]: Եռագույնի հետ միաժամանակ Հայաստանի Հանրապետության պետական հիմն (օրհներգ) ճանաչվեց ազատության երգիչ Մ. Նալբանդյանի խոսքերով գրված «Մեր Հայրենիք» հայրենասիրական երգը:

[70] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 422, թ. 21:
[71] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 138:

Ավելի ուշ՝ 1920 թ. հուլիսին, դարձյալ ժամանակավորապես, կառավարությունը հաստատեց ճարտարապետ Ա. Թամանյանի կազմած և նկարիչ Հ. Կոջոյանի ձևավորած ՀՀ զինանշանի (գերբի) նախագիծը: Կարծիք կա, որ Հայոց զինանշանի վրա տիրողաբար պատկերված առյուծը և արծիվը՝ իբրև գաղափար, մարմնավորում են երկու՝ Արևելյան և Արևմտյան Հայաստանները, այսինքն՝ վերջնանպատակը երկու Հայաստանների միանացման հանգույցն էր: Հատկանշական է, որ Հայաստանի առաջին Հանրապետության այդ երեք պետական խորհրդանիշները՝ դրոշը, օրհներգը և զինանշանը, դարավերջին ժառանգաբար ընդունեց Հայաստանի երրորդ Հանրապետությունը:

Առանձին օրենքով սահմանվեցին նաև Հայաստանի Հանրապետության պետական և ազգային-կրոնական տոները՝ Նոր տարվա, Ծննդյան, Վարդանանց, Տյառնընդառաջի, Զատկի, Մայիսի 1-ի, Թարգմանչաց, Վարդավառի, Օգոստոսի 1-ի և այլն[72]: Հռչակվում էր բոլոր կրոնների (խղճի) կատարյալ ազատություն և հավասարություն: Կանոնակարգվեցին պետության և եկեղեցու փոխհարաբերությունները: Լուծարվեց ցարիզմի ժամանակներից Հայ առաքելական եկեղեցուն պարտադրված և նրա իրավունքները սահմանափակող հոգևոր սինոդը[73]: Հայոց պետականության անվիճելի արժեքներից մեկը դարձավ հայերենը պետական պաշտոնական լեզու ճանաչելը[74]: Բացվեցին պետական պատկերասրահը, ազգային գրադարանը: Սահմանվեցին պետական շքանշաններ:

Հայոց անկախ պետականության կայացման գործում ինքնին կարևորվում էր նաև ազգային դրամի և սեփական ֆինանսական համակարգի ձևավորումը: Ռուսական ռուբլուն և անդրկովկասյան բոներին զուգահեռ 1919 թ. կեսերից շրջանառության մեջ դրվեցին հայկական չեկերը (կուպյուր), իսկ 1920 թ. ապրիլին արտասահմանում (Լոնդոնում) տպագրվեցին հայկական դրամանիշները, որոնք համարժեք էին անդրկովկասյան բոներին: Շրջանառության մեջ էին նաև ոսկե և արծաթե դրամները: Հիմնվեցին Հանրապետության պետական բանկը՝ իր բաժանմունքներով, առևտրաարդյունաբերական պալատը, կազմակերպվեց մաքսային գործը և այլն:

Այսպիսով՝ կարճ ժամանակամիջոցում Հայաստանի Հանրապետությունում ձևավորվեցին իշխանության մարմիններ, ինչն ինքնին ցույց է տալիս, որ Հայաստանը արդեն կազմակերպված պետություն էր: Պետական կառուցվածքի ու կառավարման ձևի տեսակետից Հայաստանի Հանրապետությունը խորհրդարանական գերակայությամբ դեմոկրատական (ժողովրդավարական) հանրապետություն էր: Կառավարության գլուխ կանգնած էր նախարարների խորհրդի նախագահը (նախարար-նախագահ) կամ վարչապետը, որը համարվում էր Հանրապետության առաջին պաշտոնատար անձը: Նա ընտրվում էր խորհրդարանի կողմից և իր ամբողջ վարչակազմով պատասխանատու էր նրա առջև: Խորհրդարանը վարչապետի ներկայացմամբ հաստատում էր նախարարների կազմը և կառավարության հայտագիրը իր կողմից վարվելիք քաղաքականության մասին: Խորհրդարանը ձայների պարզ մեծամասնությամբ իրավասու էր անվստահություն հայտնելու վարչապետին ու նրա վարչակազմին և նրանց փոխարինելու նոր կազմով:

Նախատեսվում էր Հայաստանում մտցնել նախագահի ինստիտուտ, իշխանությունների տարանջատման հստակ մեխանիզմ, օրենքների գերակայության վրա հիմնված դատաիրավական համակարգ, ժողովրդավարական այլ ինստիտուտներ ու կառույցներ:

Հայաստանի Հանրապետությունը չհասցրեց մշակել և ընդունել պետության հիմնական օրենքը՝ սահմանադրությունը: Ծրագրվում էր այն ընդունել հայկական հարցի վերջնական լուծումից, այսինքն՝ Հայաստանի երկու հատվածների միավորումից և միացյալ ու անկախ Հայաստանի ստեղծումից հետո նրա սահմանադիր ժողովի կողմից:

[72] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն), վավ. 66, էջ 85:

[73] Տե՛ս Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Ե, Երևան, 1999, էջ 32–34:

[74] Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918–1920 թթ.), վավ. 535, էջ 209: ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 86, թ. 83:

Աղբյուրը՝ *«Հայոց պատմություն. նորագույն ժամանակաշրջան (1918-1945)»*, հ. IV, գիրք I, խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2010, էջ 27-37: